

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Միջպետական տնտեսական հարաբերությունների արդյունավետ ծավալման համար առանցքային նշանակություն ունի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համագործակցության ռդրոտների հստակեցումը: Այդ իմաստով յուրաքանչյուր պետություն իր արտաքին տնտեսական գործունեության համար որոշում է այն ռազմավարական ուղղությունները, որոնք, միջազգային շուկայում ընդունակ լինելով ապահովել մրցունակ առաջարկ, մատչելի և շահավետ են ներդրումային քաղաքականության համար՝ որպես տվյալ երկրի հեռանկարային զարգացման և տնտեսական անվտանգության կարևորագույն երաշխիք:

Այս համատեքստում հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության գերակա ուղղությունների նախանշման կապակցությամբ խիստ կարևոր է 1993թ. մարտի 12-ին Փարիզում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանի կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Հանրապետության միջև փոխըմբռնման, բարեկամության և համագործակցության մասին» միջպետական պայմանագիրը¹, որի հիման վրա իրականացվել են մի շարք ծրագրեր.

Արդյունաբերություն և առևտուր

Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո երկու երկրները հետաքրքրություն են ցուցաբերել երկկողմ տնտեսական հարաբերությունների ընդլայնման և զարգացման նկատմամբ: Այդ կապակցությամբ ՀՀ դիրքորոշումը հստակ ձևակերպել է ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, ասելով. «Հայաստանի համար Ֆրանսիան ռազմավարական գործընկեր է և մենք շահագրգիռ ենք երկկողմ տնտեսական հարաբերությունների խորացման և զարգացման խնդրում»²:

¹ "Республика Армения", 1993, 16 марта, с. 2.

² "Республика Армения", 1998г., 2 июля, с. 2.

Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրատնտեսական համագործակցությունը կարգավորվում է 1995թ. ապրիլին ստորագրված «Ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» պայմանագրով, 1995թ. դեկտեմբերին ստորագրված «Մաքսային իրավախախտումների դեմ պայքարի բնագավառում փոխըմբռնման և համագործակցության» հուշագրով և 1996թ. ապրիլին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրամիության անդամ երկրների միջև գործընկերության և համագործակցության մասին» պայմանագրով³:

Ակնհայտ է, որ Հայաստանի և Ֆրանսիայի տնտեսական համագործակցության խոշորագույն գործարքը իրագործվել է 1998թ. հունիսի 12-ին, երբ ՀՀ սեփականաշնորհման նախարարը և ֆրանսիական Պեռնո Ռիկար խմբի գլխավոր տնօրենը Փարիզում ստորագրեցին Երևանի Կոնյակի գործարանի սեփականաշնորհման պայմանագիրը, համաձայն որի, բացի 30 մլն ԱՄՆ դոլար գնման արժեքից, ֆրանսիական ընկերությունը պարտավորվեց հետագա հինգ տարում 4 մլն դոլար ներդնել հայկական կոնյակի արտադրական սարքավորումների արդիականացման և առևտրի զարգացման նպատակով⁴:

Ֆրանսիայի հետ ՀՀ արտաքին առևտրի ծավալի փոփոխության դինամիկան 1993-2000թթ. ունի հետևյալ պատկերը.

Արտահանում (հազար դոլար)⁵

1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
125	432	153	400	40	100	521	470

Ներմուծում (հազար դոլար)⁶

1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000
912	10 696	16 309	12 000	19 500	27 400	12 326	17 500

³ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, ք. 8:

⁴ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, ք. 30:

⁵ ՀՀ ազգ. վիճ. ծառ., «ՀՀ արտաքին առևտուրը» ժողովածու, ըստ տարիների:

⁶ Նույն տեղում, ըստ տարիների:

Երկու երկրների միջև ապրանքաշրջանառության և ներդրումների ընդհանուր դինամիկան տարեցտարի արձանագրել է աճի միտում և արդեն 2000թ. ընթացքում 33 և Ֆրանսիայի արտաքին առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 16 մլն դոլար, որից 0,4 մլն դոլար՝ արտահանում և 15,6 մլն դոլար ներմուծում: Դա նշանակում է, որ Հայաստանից Ֆրանսիա արտահանման ծավալը 2000թ. կազմել է Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 0,16 %, Ֆրանսիայից Հայաստան ներմուծումը՝ համապատասխանաբար 1,95 % ⁷:

Կարելի է արձանագրել, որ հայ-ֆրանսիական քաղաքական, մշակութային և գիտական համագործակցության համեմատ երկու երկրների միջև առևտրաարդյունաբերական կապերի տեսակարար կշիռը խիստ փոքր է եղել՝ ժամանակի հրամայականը դարձնելով անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը այն խթանելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ 2000թ. ընթացքում Հայաստանից Ֆրանսիա հիմնականում արտահանվել են մանածագործական իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր և սննդամթերք: Նույն տարում Ֆրանսիայից Հայաստան են ներմուծվել կատարվել է հիմնականում մեքենաներ և սարքավորումներ, մանածագործական իրեր ու քիմիական արդյունաբերության արտադրանք⁸: Այդ ժամանակահատվածում երկու երկրների միջև առևտրի ծավալը կազմել է՝ 130000 դոլար արտահանում և 280000 դոլար ներմուծում:

Վերջին տարիներին նկատվել է դեպի Հայաստան Ֆրանսիացի զբոսաշրջիկների այցելությունների աճ: Ջրոսաշրջության բնագավառում Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցությունը հիմնականում իրականացվել է ֆրանսիական կողմից տեխնիկական օգնության շրջանակներում կադրերի վերապատրաստման ձևով: Միաժամանակ, Ջրոսաշրջության Համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանում

⁷ 37 ազգ. վիճ. ծառ., «37 արտաքին առևտուրը» ժողովածու, 2000թ., ք. 8:

⁸ Նույն տեղում, ք. 9-10:

տուրիզմի զարգացման ծրագիր-նախագծի մշակման գործում ակտիվ մասնակցություն են բերել ֆրանսիական փորձագետները ⁹:

Առևտրատնտեսական ոլորտում առկա է այն առավել ընդարձակելու երկկողմ ձգտումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆրանսիան ամենամեծ ներդրողներից է Հայաստանում: Միևնույն ժամանակ հայկական ընկերություններն ու ձեռնարկությունները վստահ քայլեր են կատարել ֆրանսիական շուկայում իրենց ներկայությունն ապահովելու համար: Ֆրանսիայում մեծ պահանջարկ ունեն և հաջողությամբ վաճառվում են հայկական զինիները, զարեջուրը, գյուղատնտեսական տարբեր արտադրատեսակները ¹⁰:

Հայ-ֆրանսիական տնտեսական հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, այդ ոլորտում առավել մեծ տեսակարար կշիռ ունի էներգետիկան, որին կանդրադառնանք ստորև:

Էներգետիկա

1. Եվրամիության «Տասիս» ծրագրի շրջանակներում ֆրանսիական BCEOM ընկերությունը արևմտաեվրոպական ընկերությունների հետ կոնսորցիումի կազմում Հայաստանում իրականացրել է երկու ծրագիր ¹¹.

ա) 1993-1994թթ. ընթացքում կյանքի է կոչվել «Հայաստանի էներգախնայողություն ազգային ռազմավարություն» ծրագիրը, որի շրջանակներում մշակվել է համապարփակ էներգախնայողության հայեցակարգ՝ տնտեսության տարբեր բնագավառների համար: Առաջարկություններ են ներկայացվել էներգետիկ հատվածի գործունեության օրենսդրական դաշտի կատարելագործման վերաբերյալ: Համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել են էներգետիկային և էներգախնայողությանը վերաբերող ՀՀ օրենքների նախագծերը: Էներգասպառման կանխատեսումներ են կատարվել մոտակա 15 տարիների կտրվածքով, ուսումնասիրվել է էներգետիկ համակարգի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ստացված արդյունքներն

⁹ ՀՀ ԱԳԼ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, ք.12-13:

¹⁰ «Ազգ», 2001, 9 փետրվար, ք.4:

¹¹ ՀՀ ԱԳԼ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, ք. 6-7:

Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխելու վկայություն է այն, որ ՀՀ էներգետիկայի զարգացման Ֆրանսիայի կողմից միակողմանի օգնությունից անցում է կատարվում փոխշահավետ համագործակցության, այդ թվում մասնավոր ձեռնարկատիրական երկկողմ հարաբերությունների: Դա վկայում է ֆրանսիական ընկերությունների տնտեսական շահագրգռվածության մասին և կարող է պայմաններ ստեղծել ՀՀ էներգետիկ ոլորտում ֆրանսիական մասնավոր կապիտալի ակտիվ ներգրավման համար:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցությունը սկսվել է 1991թ.-ից: Հողի սեփականաշնորհումից հետո առաջ եկավ գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորման և վարկավորման անհրաժեշտությունը և այդ նպատակով ստեղծվեց «Հայգյուղփոխօգնության» բանկը: Գյուղատնտեսական բարեփոխումների ծրագրի մշակման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետները 1996թ. գործուղվել են Ֆրանսիա՝ տեղական փորձն ուսումնասիրելու համար¹⁶:

Ֆրանսիայի Իզերի նահանգի գյուղատնտեսական պալատի աջակցությամբ և ֆինանսավորմամբ Հայաստանի Արմավիր մարզում իրականացվել են մարզի տարածքում անասնազխաքանակի հաշվառման, համարակալման, տվյալների բանկի ստեղծման ուղղությամբ:

1994թ. սեպտեմբերի 29-ին Ֆրանսիա է այցելել ՀՀ կառավարական պատվիրակությունը: Կայացած բանակցությունների ու հանդիպումների ժամանակ քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում երկկողմ հարաբերությունների զարգացման խնդիրներ: Հարկ է նշել նաև, որ 1996թ. Ֆրանսիայի կառավարությունը Հայաստանին անհատույց տրամադրել է 5000 տոննա հացահատիկ, իսկ 2000թ. ՀՀ-ում երաշտի հետևանքների վերացման համար՝ 6000 տ. ալյուր¹⁷:

¹⁶ Նույն տեղում, թ. 15-16:

¹⁷ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, թ. 15-16:

վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում նույնպես աստիճանաբար վերափոխվում են ՀՀ միջպետական համագործակցության առաջնայնությունները՝ օգնության ծրագրերից անցում կատարելով համալիր ծրագրերի վարկավորմանը: Այս առումով գյուղատնտեսական փոխշահավետ համագործակցության ուղղությամբ ՀՀ համար առաջնային գործընկերներից մեկը, համոզված ենք, լինելու է Ֆրանսիան:

Տրանսպորտ և կապ. Անշուշտ, այս բնագավառում նույնպես կատարվել են որոշակի քայլեր: Այսպես, ՀՀ կապի նախարարությունը France Telecom-ի հետ 1992թ. կնքել է համաձայնագիր միջազգային հեռախոսակապի ստեղծման մասին¹⁸, իսկ 1993թ. La Poste պետական ձեռնարկության հետ ստորագրել է արձանագրություն, որի հիման վրա 1993թ.-ից Ֆրանսիայի հետ իրականացվել է ուղիղ փոստափոխանակում¹⁹: 1994թ. ստորագրվել է երկու երկրների միջև ուղիղ դրամական փոխանցումներ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը: 1995թ. ՀՀ կապի նախարարության և ֆրանսիական Alcatel ընկերության միջև ստորագրվել է պայմանագիր Ստեփանավան քաղաքում E-10 տիպի 1000 ավտոմատ հեռախոսային կայանների տեղադրման մասին, որը և շահագործման է հանձնվել 1996թ.²⁰: Փորձեր են կատարվել նաև համագործակցելու երկաթուղային տրանսպորտի, խճուղիների կառուցման, օդագնացության բնագավառներում: Հայաստանում ֆրանսիական դեսպանատան ջանքերով 1995թ. հաջողվել է ֆինանսավորում գտնել Բաթում-Գյումրի ճանապարհի շինարարության համար, որը հետագայում նախատեսվում է միացնել Երևան-Սեղրի-Թավրիզ ավտոմայրուղուն²¹: Ֆրանսիական «Թոմսոն» ընկերության հետ 1995թ. մշակվել է օդագնացության անվտանգության ապահովման ծրագիր²²:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի ներկայիս տնտեսական շրջափակումը լուրջ խոչընդոտ է հանդիսանում Հայաստանի և

¹⁸ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ. «Հայ-ֆրանսիական փոխադրաբերություններ» թղթ. թ. 15:

¹⁹ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ. «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապամակ, թ. 12:

²⁰ ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ. «Հայ-ֆրանսիական փոխադրաբերություններ» թղթ. թ. 15:

²¹ «Վզգ», 1995թ., 30 մայիս, թ. 2-3:

²² Նույն տեղում, թ. 3:

Ֆրանսիայի միջև ուղիղ տրանսպորտային փոխադրումների կազմակերպման համար: Չնայած դրան, տրանսպորտի, հեռահաղորդակցության ու կապի ոլորտներում ընթացող տարաբնույթ համագործակցության հետագա ծավալումը առաջնահերթ նշանակություն ունի, քանի որ դրանից է մեծամասամբ կախված երկկողմանի տնտեսական առնչությունների մատչելիությունն ու շահավետությունը:

Բանկային համակարգ. ԴՊ բանկային համակարգի զարգացման բնորոշ գծերից է եղել միջազգային ֆինանսական և վարկահաշվարկային համակարգերի հետ սերտ ինտեգրացումը: ԴՊ տարածքում գործող բանկերը համագործակցել են ֆրանսիական BNP, Credit Agricole C. N., Credit Lyonnais, Credit Commercial de Paris և այլ բանկերի հետ:

1990-ական թվականներին Հայաստանի տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության զարգացմանը խթանելու նպատակով «Տասիս» ծրագրի համաձայն՝ աշխատանքներ սկսվեցին «Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկ» ստեղծելու նպատակով: Այս նախաձեռնությանը աջակցեցին Ֆրանսիայի, Իռլանդիայի և Գերմանիայի գյուղացիական փոխօգնության բանկերը²³: Արդյունքում 1995թ. օգոստոսին հիմնադրվեց «Հայգյուղփոխօգնության» բանկը:

Օտարերկրյա ներդրումների խթանման նպատակով կարևորվել է Հայաստանում անկախ աուդիտորական կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը: Ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ Հայաստանում ստեղծվել է Amyot Exco աուդիտորական կազմակերպությունը, որը ծառայություններ է մատուցում ԴՊ-ում գործող բազմաթիվ ձեռնարկություններին ու բանկերին: Իր հերթին, Արդշինբանկը 2000թ. Փարիզում բացել է իր ներկայացուցչությունը և սկսել է ֆրանսիական շուկայի ուսումնասիրությունը:

1995թ.-ից ի վեր համագործակցություն է ծավալվել ԴՊ և Ֆրանսիայի Կենտրոնական բանկերի միջև կադրերի ուսուցման և վերապատրաստման բնագավառում²⁴: 1995-2000թթ. ԴՊ Կենտրոնական բանկի 70 մասնագետներ

²³ ԴՊ ԿԲ, «Հայաստանի բանկային համակարգ. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» թղթապանակ, 2000թ., թ. 5:

²⁴ ԴՊ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխադրաբերություններ» թղթ. թ. 9:

վերապատրաստվել են Ֆրանսիայի Կենտրոնական բանկի Բանկային և Ֆինանսական Միջազգային ինստիտուտում, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բանկային վերահսկողությունը, կազմակերպումն ու մեթոդները, արտարժույթի պահուստների կառավարումը, դրամանենգության և ֆինանսական օրինախախտումների դեմ պայքարը, արտաքին պարտքի կառավարումը, դրամավարկային քաղաքականությունը, հաշվապահական հաշվառումը և այլն:

1997թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Կենտրոնական բանկերի միջև համագործակցության վերաբերյալ արձանագրություն է կնքվել, որով պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ծրագրեր իրականացնել դրամավարկային և բանկային վիճակագրության, թղթադրամների փորձագետների վերապատրաստման և այլ բնագավառներում²⁵:

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգի կայացման և երաշխիքային վարկանիշի բարձրացման խնդրում կարևորագույն բաղադրիչ է համագործակցությունը համաշխարհային դրամական շրջանառության կայունության ապահովման կենտրոններից մեկը հանդիսացող ֆրանսիական բանկային համակարգի հետ: Այդ փոխհարաբերությունների հետագա խորացմանը, թերևս, իր էական նպաստը կբերի տնտեսական կապերի ու ապրանքաշրջանառության ընդլայնմամբ պայմանավորված դրամական փոխանցումների կայուն աճը:

Ամփոփելով քննարկվող նյութը՝ հստակեցնենք այն ձեռքբերումները, որոնք նաև Ֆրանսիայի հայկական համայնքի գործունե աջակցությամբ արձանագրվել են շուրջ տասնամյա հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության արդյունքում:

Հայաստանում 2001թ. հունիսի դրությամբ գրանցվել է 69 հայ-ֆրանսիական համատեղ ձեռնարկություն, որոնց գործունեության հիմնական ոլորտները ներառել են՝

- մանրամեծածախ առևտուր («Բիլվեդեր», «Ֆարմամեդիկա», «Ֆարմվեստ», «Վասը-Ռենեսանս», «Կաստել-Փարաքար», «Սեգաս», «Փարոս», «Վահագն» և այլն),
- հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ («Շ. Ժերիգոյի տնտեսական և առևտրային զարգացում»

²⁵ Նույն տեղում, թ. 15:

հասարակական կազմակերպություն),

- հաշվապահական հաշվառման, վերահսկողության ու վերստուգման բնագավառի գործունեություն («Ամիո-աուդիտ-խորհրդատվություն», «Ամիո-էքսկո-Հայաստան»),
- էլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրություն («Կապան-էներժի»),
- առանց բնակության ապահովման սոցիալական ծառայություններ («Սիջազգային ակցիա սովի դեմ», «Բժիշկներ առանց սահմանի»),
- շուկայագիտության և հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ («Նորաշեն», «Ամիո գործարարության խորհուրդ»),
- գրքերի, աշխատությունների, բրոշյուրների և ժողովածուների հրատարակում («Հայ էդիթ»),
- գյուղատնտեսական ոլորտի ծառայություններ, խմիչքների արտադրություն («Աբովյանի գարեջրի գործարան», «Կոնյակի գործարան»),
- զբոսաշրջային և հյուրանոցային բիզնես, ճանապարհորդական բյուրոների մասնագետների, տուրիստական գործակալների և էքսկուրսավարների վերապատրաստման դասընթացներ («Սաբերատուր Սևան», «Փիենյուգրուպ», «Սարմանարմ»):

2001թ. փետրվարին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Ֆրանսիա կատարած պետական այցի ժամանակ նախագահ Ժ. Շիրակը ասել է, «2001թ. պետք է նոր լծակ հանդիսանա մեր երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Մեր տնտեսական կապերը պետք է նոր թափ ստանան: Բազմաթիվ ֆրանսիական ձեռնարկություններ մտնում են: Հայաստանում օտարերկրյա հիմնական ներմուծողների շարքը: Նրանք ցանկանում են զարգացնել իրենց գործունեությունը և մեծ ծրագրեր իրականացնել: Քաղաքական և սոցիալական կայունություն, կանոնակարգերի թափանցիկություն, գործընթացների պարզություն՝ ահա այն տարրերը, որոնք նրանց թույլ կտան աշխուժորեն առաջ ընթանալ»²⁶:

Այսպիսով, վերջին տաս տարիների ընթացքում տարբեր ուղղություններով սկսված հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցությունն ունի զարգացման լավագույն հեռանկարներ և կարող է դառնալ այն շարժիչ ուժը, որի հիման վրա նյութական բովանդակություն կստանա երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

²⁶ ՀՀ ԱԳՆ-ի ընթացիկ արխիվ, «Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի ելույթը» թղթապանակ, թ. 3-4: